

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2017 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը.
- Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.
- Համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպումը.
- Իրավական հսկողությունը մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ և ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնության կազմակերպումը.
- Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:

2017թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 նիստեր: Նիստերի օրակարգերում ընդգրկվել և քննարկվել են 12 հարցեր:
- Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման և տեղական ինքնակառավարման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել և ընդունվել են մարզպետի 21 որոշումներ:

- Աջակցություն է ցուցաբերվել թիվ 22, 23, 24, 25 տարածքային ընտրական հանձնաժողովներին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ ՀՀ Ազգային ժողովի, մարզի համայնքների ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:
- Կազմակերպվել է ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերի քննարկումներ, ստացված առաջարկությունները և դիտողությունները ներկայացվել են այդ մարմիններին:
- Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված **8391** գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը, **2016թ.-ին՝ 6269**:
- Ներկայացվել է պաշտոնական թղթակցությունների, հանձնարարականների կատարման **977** պատասխանների նախագծեր, 2016թ.-ին՝ **1117**:
- Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված **106** դիմում-բողոքներ և ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր, 2016թ.-ին՝ **77**:
- Ըստ անհրաժեշտության և ստացված հանձնարարականների կազմվել և համայնքների ՏԻՄ-երին է ուղարկվել **175** շրջաբերական գրություններ, 2016թ.-ին՝ **132**:
- Վարչության աշխատակիցները մասնակցել են **35** համայնքներում Լոռու մարզպետի 20.01.2017թ. թիվ 15-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական հսկողության աշխատանքներին և դրանց վերաբերյալ քննարկումներ են կազմակերպվել Լոռու մարզպետի տեղակալների մոտ: Հսկողության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ զգալի առաջընթաց կա տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերով կարգավորվող կարգերի և ընթացակարգերի հաստատման ուղղությամբ: Իրավական հսկողություն իրականացված բոլոր համայնքների ավագանիների կողմից հաստատվել են տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության իրականացման, ՏԻՄ-երի կամավոր խնդիրների իրականացման կարգերը:

- Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, նրա տեղակալների, մարզպետարանի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:
- Համակարգվել է համայնքների 2016 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցության աշխատանքները:
- Պարբերաբար հավաքագրվել և ըստ եռամսյակների ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել, համապատասխանեցնել գործող օրենսդրությանը: 2017 թվականին ստացվել են համայնքների ավագանիների **3554** և համայնքների ղեկավարների **7220** որոշումներ:
- Ըստ անհրաժեշտության և մարզպետի, մարզպետի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի հանձնարարականների վարչությունը համագործակցել է մարզպետարանի աշխատակազմերի ստորաբաժանումների հետ առկա խնդիրների համատեղ լուծման համար:
- Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ (զինկոմիսարիատներ, ոստիկանության մարզային վարչություն, վիճակագրության ծառայության մարզային բաժին, փրկարարական մարզային վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

- 2017 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի ընտրություններ **13** համայնքներում, որից **10**-ում խոշորացված համայնքների ղեկավարների և ավագանիների, **2**-ում համայնքի ղեկավարի, **1**-ում ավագանու անդամների:
- ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2016թ.-ի երկրորդ կիսամյակում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների ցուցակները, 2017թ. հուլիսին համայնքապետարաններին տրամադրվել է հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված քաղաքացիների ցուցակները:
- Կարևորելով ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարներին ուղարկվել են գրություններ:
- Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանների աշխատակազմերին գույքահարկի բազաների վարման աշխատանքները կազմակերպելու հարցում, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացվել և աշխատակազմերին է տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների ցանկը: Ամիսը մեկ անգամ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունքից ստացվել, տեսակավորվել և ըստ համայնքների աշխատակազմերին է տրամադրվել հաշվառված և հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների ցուցակները:
- Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի հետ ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (**ՀաՄաՏեղ**) ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացրել է ՀՀ բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների

դիտարկման (մոնիտորինգ): Մոնիտորինգի հարցումներով **Երկրորդ տարին** անընդմեջ գրեթե բոլոր ցուցանիշներով լավագույնը Լոռու մարզն է, որը հիմնականում պայմանավորված է վարչության համակարգված և արդյունավետ աշխատանքով:

- Մարզի 56 համայնքներից 38-ը ապահովված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով՝ 67.9% :
- Մարզի 37 համայնքներ ունեն ինտերնետային կայքեր, սակայն այդ կայքերի շահագործման մակարդակը գոհացուցիչ չէ: Վարչության կողմից հետևողական աշխատանքներ են կատարվում համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման ուղղությամբ:
- ՀԿՏՀ ներդրած համայնքների համակարգերը միացված են Mullbery համակարգին՝ էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնելու նպատակով, սակայն այդ համայնքներից մեծ մասը փաստաթղթաշարժը մարզպետարանի հետ չեն իրականացնում այդ համակարգում տարաբնույթ տեխնիկական անսարքությունների պատճառաբանությամբ:
- Ապրիլ ամսին տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը (ՏՀԶՎԿ) իրականացրել է մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկում, որի արդյունքները ներկայացվել է մարզպետարանում կազմակերպված սեմինարի ժամանակ համայնքապետարանների և ՏՀԶՎԿ համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են **56** մրցույթներ, որոնցից կայացել են **19-ը**: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են **25** քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են **24-ը**: Մրցույթների արդյունքում հաղթող ճանաչվել և թափուր պաշտոններում նշանակել են **16-ը**:
- Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային

կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և հանրային իրազեկման նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում:

- Վարչության աշխատակիցները համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում մասնակցել են մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 67 համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքներին:
- ««Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի» ՀԿ-ի հետ կազմակերպվել է Վանաձորի և Սպիտակի համայնքապետարանների աշխատակազմերի 47 համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների վերապատրաստումը:
- Քննարկվել են խոշորացված համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության անվանացանկերի վերաբերյալ առաջարկությունները և դրանք ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հաստատմանը:
- Մշտական մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին ՏԻՄ ոլորտի գործող օրենսդրության և հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման և գործավարության կազմակերպման հարցերում:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- ՀՀ Լոռու մարզպետի որոշումներով մարզի տարածքում կազմակերպվել և անց են կացվել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով սահմանված

բոլոր միջոցառումները, այդ թվում շտաբային, հատուկ տակտիկական, օբյեկտային ուսումնավարություններ:

- Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաստատված պլանի կազմակերպվել է ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2017 ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացների մասնակցությունը: Համաձայն հաստատված պլանի տարվա ընթացում դասընթացներին պետք է մասնակցեին 41 ունկնդիր, որոնցից մասնակցել են 40-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Լոռու մարզպետի կողմից մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության կողմից 2017 թվականին կատարած աշխատանքների հաշվետվության ներկայացման ժամանակ տրված հանձնարարականների կատարման մասին

Հանձնարարվել էր՝

1. Համայնքների գույքահարկի և հողի հարկի տեղեկատվական շտեմարանները թարմացնելու և դրանք առավելագույն չափով իրականությանը համապատասխանեցնելու նպատակով «Վեկտոր Պյուս» ՍՊԸ-ի հետ կազմակերպել գույքահարկի և հողի հարկի հաշվառման համակարգի օպերատորների ուսուցում այն համայնքների համար, որոնք չունեն որակյալ մասնագետներ:

«Վեկտոր Պյուս» ՍՊԸ-ի հետ կազմակերպվել է Շահումյան և խոշորացված Գյուլագարակ համայնքների գույքահարկի և հողի հարկի հաշվառման համակարգերի օպերատորների ուսուցումը, առաջիկայում ուսուցում կանցնեն Սարչապետ և Դսեղ համայնքների օպերատորները (հայտերը ներկայացվել են «Վեկտոր Պյուս» ՍՊԸ-ին):

Համայնքների խոշորացումից հետո բոլոր համայնքներին տրամադրվել է միավորված համայնքների գույքահարկի և հողի հարկի բազաները:

2. Մարզի ՏԻՄ-երին մեթոդական, գործնական և խորհրդատվական աջակցություն տրամադրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով պայմանավորված պարտադիր կատարման ենթակա պահանջները կարգավորվող կարգերի և ընթացակարգերի հաստատման և իրականացման ուղղությամբ:

Մշակվել և ՏԻՄ-երին է տրամադրվել կամավոր խնդիրների իրականացման, համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման կարգերը, լրամշակվել և խոշորացված համայնքներին է տրվել ավագանու կանոնակարգի հաստատման, համայնքապետարանի կանոնադրության հաստատման, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարների նստավայրերը սահմանելու մասին, համայնքային կառավարչական հիմնարկ հիմնադրելու մասին, համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների

թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին և այլ որոշումների նախագծերը:

3. Մինչև ս./թ. փետրվարի 5-ը ուսումնասիրել Վանաձոր համայնքի կայքի կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջական կիրառման հետ կապված խնդիրները և Վանաձորի համայնքապետարանի հետ ձեռնարկել միջոցներ կայքում տեղադրված հողի հարկի և գույքահարկի բազայի տվյալները քաղաքացիներին հասանելի դարձնելու համար:

Վանաձորի համայնքապետարանի հետ ուսումնասիրվել է համայնքի կայքի կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջական կիրառման հետ կապված խնդիրները և այժմ կայքում քաղաքացիներին հասանելի է դարձել հողի հարկի և գույքահարկի բազայի տվյալները:

4. Աջակցել Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի, Սպիտակ և Տաշիր համայնքների ավագանու հրապարակային նիստերը համայնքի պաշտոնական համացանցային կայքով առցանց հեռարձակում իրականացնելու աշխատանքների կազմակերպմանը:

Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ և Տաշիր համայնքների ավագանու հրապարակային նիստերը համայնքի պաշտոնական համացանցային կայքով առցանց հեռարձակվում է, Ստեփանավան համայնքում առկա տեխնիկական խնդիրները լուծվել են, այս տարվա առաջին նիստը կհեռարձակվի առցանց:

5. Աջակցել 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների պաշտոնական համացանցային կայքերի վարման աշխատանքների կազմակերպմանը:

Մարզի 3000 և ավելի բնակիչ ունեցող 16 համայնքներից 14-ը վարում են պաշտոնական համացանցային կայքեր: Առաջիկայում ծրագրային խնդիրները լուծելուց հետո Գյուլագարակ համայնքը ևս կվարի համացանցային կայքը: Լոռի Բերդ նախկին համայնքը չի ունեցել համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ և այդ պատճառով ներկայիս խոշորացված համայնքը դեռևս չունի պաշտոնական համացանցային կայք:

6. Վերահսկել համայնքների ղեկավարների, համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների ամենամյա և չօգտագործված արձակուրդների տրամադրման աշխատանքները:

Վարչությանը կողմից 2017թ. սկզբին համայնքների հետ ճշտվել են աշխատակազմերի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության կազմակերպությունների և հիմնարկների աշխատակիցներին 2003-2016թթ. ընթացքում չտրամադրված ամենամյա (լրացուցիչ) արձակուրդների տվյալները, կազմվել են արձակուրդների տրամադրման գրաֆիկներ և եռամսյակային պարբերականությամբ տվյալները ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Կատարված աշխատանքների արդյունքում՝ նախորդ տարիներին չտրամադրված արձակուրդների խնդիրներ ունեցող 15 համայնքների 49 աշխատակիցներին ամբողջությամբ տրամադրվել են արձակուրդները կամ վերջնահաշվարկով կատարվել են չօգտագործված արձակուրդի օրերի համար վճարումները, որը կազմել է 11521705 դրամ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Տարվա ընթացքում համայնքների խոշորացման գործընթացի կազմակերպման աշխատանքների, ՏԻՄ-երին մեթոդական, խորհրդատվական և գործնական աջակցության կազմակերպում:
- Մարզում չօգտագործվող համայնքային և մասնավոր գույքի շտեմարանի կազմում և այդ գույքի նպատակային օգտագործման վերաբերյալ առաջարկների ներկայացում:
- Համայնքների սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018թ. ծրագրերի կազմման աշխատանքների կազմակերպում:
- Համայնքների պաշտոնական ինտերնետային կայքերի հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ աշխատանքների շարունակում:
- Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման աշխատանքներին մասնակցություն և հսկողության արդյունքների վերաբերյալ քննարկումների կազմակերպում:
- Մասնակցություն համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներին:
- Մասնակցություն հողի հարկի և գույքահարկի բազաներում առկա անճշտությունների նվազեցման աշխատանքներին:
- Խոշորացված համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթների կազմակերպման և անցկացման համակարգում:
- Իրավաբանական անձանց և տնտեսվարող սուբյեկտների հետ աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման կազմակերպման աշխատանքներին մասնակցություն, համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:
- Մասնակցություն ՏԻՄ-երի, համայնքապետարանների աշխատակազմերի աշխատողների վերապատրաստումների կազմակերպման աշխատանքներին:
- Համայնքներում առկա հանրային իրազեկման միջոցների (կայքեր, ցուցատախտակներ) պարբերական դիտարկման աշխատանքների իրականացում:

- Համայնք-մասնավոր հատված համագործակցության վերաբերյալ համայնքներին մեթոդական և խորհրդատվական օգնության կազմակերպում և կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում:
- Մասնակցություն համայնքների աղետների ռիսկերի կառավարման պլանների կազմման աշխատանքներին:
- Մասնակցություն մարզային զորակոչային հանձնաժողովի գործունեության կազմակերպման աշխատանքներին:
- 2002 թվականին ծնված պատանիների կցագրման աշխատանքների համակարգում:
- Արտակարգ իրավիճակներում մարզի բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումների շրջանակներում ուսումնավարժությունների անցկացման համակարգում:
- Վարչության գործառույթներով պայմանավորված և պարբերական բնույթ կրող աշխատանքների իրականացում: